Հավելված

Հաստատված է

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2003 թ. հունվարի 13-ի N 1Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

Սույն կարգով կարգավորվում է էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ համակցված), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման, էլեկտրաէներգետիկայի և բնական գազի համակարգերի օպերատորների և էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություններ մատուցող ընկերությունների սակագների սահմանման ու վերանայման գործընթացը:

Սույն կարգը չի տարածվում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման սակագների վրա:

1.ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Սույն կարգում օգտագործված որոշ հասկացություններ սահմանվում են հետևյալ կերպ.

ներդրումներ՝ ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներ, որոնք ուղղված են լիցենզավորված գործունեության համար օգտակար և օգտագործվող ակտիվների մեծացմանը«

հայտ (հայտի փաթեթ)՝ սույն կարգի համաձայն սակագնի սահմանման կամ վերանայման համար ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի փաթեթ,

հայտատու՝ սակագների սահմանման կամ վերանայման հայտ ներկայացնող իրավաբանական անձ:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Սակագների սահմանման ու վերանայման առնչությամբ հայտատուի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը և ցանկը (հայտի փաթեթը) սահմանում է ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

2.2 Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ հանձնաժողովի նախաձեռնությամբ:

2.3 Սակագների գործողության ժամկետը 6 ամսից պակաս չի կարող լինել« բացառությամբ այն դեպքի« երբ լիցենզավորված անձը խախտում է գործունեության լիցենզիայի պայմանները: Նման դեպքում հանձնաժողովն իրավունք ունի նշված ժամկետից շուտ փոխել լիցենզավորված անձի սակագները« որոնք ուժի մեջ կմնան մինչև նրա կողմից թույլ տրված խախտման վերացումը:

2.4 Փոքր հիդրոէլեկտրակայանների սակագները սահմանվում ու վերանայվում են համաձայն սույն կարգի № 6 հավելվածով սահմանված «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկայի»:

2.5 Հայտատուն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում հանձնաժողով ներկայացրած« սույն կարգով նախատեսվող« տեղեկատվության հավաստիության համար:

2.6 Հայտատուի կողմից հանձնաժողով ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է վավերացված լինեն ընկերության կնիքով և պատասխանատու անձի (անձանց) ստորագրությամբ:

3. ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ« ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

3.1 Սակագների սահմանման ու վերանայման համար հայտատուն համապատասխան հաշվարկներով և հիմնավորումներով հայտ է ներկայացնում հանձնաժողով՝ երկու օրինակից, համաձայն սույն կարգի № 1 հավելվածով սահմանված փաստաթղթերի ցանկի:

3.2 Հայտը հանձնաժողովում մուտքագրելուց հետո հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է հայտի ամբողջականությունը« նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը:

3.3 Հանձնաժողովը հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ հայտը հանձնաժողովում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4 Հայտը չի ընդունվում ուսումնասիրության« եթե՝

ա) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ« այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին.

բ) ներկայացված փաստաթղթերում և տեղեկատվություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ:

3.5 Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում այն հայտատուին չի վերադարձվում և պահպանվում է հանձնաժողովում:

3.6 Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում հայտատուն կարող է նոր հայտով դիմել հանձնաժողով: Այդ դեպքում հայտատուն իրավունք ունի կատարել հղում նախկին հայտով ներկայացված փաստաթղթերի վրա, եթե դրանցում ներկայացված տվյալները չեն փոփոխվել նոր հայտի ներկայացման պահին:

3.7 Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում հանձնաժողովն սկսում է այն ուսումնասիրելու գործընթացը: Հանձնաժողովը սակագինը սահմանում« վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) և համապատասխան որոշում է կայացնում հայտատուին հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո՝

ա) սակագների սահմանման դեպքում՝ 60 օրվա ընթացքում,

բ) սակագների վերանայման դեպքում՝ 90 օրվա ընթացքում:

3.8 Հանձնաժողովն իրավունք ունի հայտատուից պահանջել նաև լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ նշելով ներկայացման ժամկետը: Եթե խախտվում են լրացուցիչ տեղեկատվության և փաստաթղթերի ներկայացման համար

հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետները, ապա ուշացման ժամանակը չի ներառվում սույն կարգի 3.7 կետում սահմանված ժամկետներում:

3.9 Սակագների սահմանման ու վերանայման վերաբերյալ հանձնաժողովի որոշման պատճենն ուղարկվում է հայտատուին որոշումն ընդունելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.10 Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունելուց 30 օր հետո:

3.11 Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգով նախատեսված դեպքերում հանձնաժողովը գործունեության լիցենզիաների տրամադրման և սակագների սահմանման որոշումները ընդունում է միաժամանակ:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

4.1 Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ սույն կարգի համաձայն կարող է վերանայել գործող սակագինը և սահմանել նոր սակագին՝ ելնելով լիցենզավորված անձի տնտեսական գործունեության արդյունքներից« ներդրումային ծրագրերի և սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից:

4.2 Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ սակագների վերանայման գործընթաց ձեռնարկելու դեպքում՝

ա) նախապես այդ մասին գրավոր տեղեկացնում է լիցենզավորված անձին.

բ) լիցենզավորված անձից կարող է պահանջել լիցենզավորված գործունեությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվություն: